



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեռ № _____

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՏԵՄ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՐԻՑՅԱՆԻՆ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն...

Կից Ձեզ ենք տրամադրում «Արդյունաբերության զարգացման 2016-2020 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Խնդրում ենք նախագծի վերաբերյալ տրամադրել Ձեր դիրքորոշումը: Առդիր՝ 25 էջ:

Հարգանքով՝

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

----- 2015 թվականի N -----Ն

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-184-Ն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել արդյունաբերության զարգացման 2016-2020 թվականների պետական ծրագիրը համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Նախաբան

Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ դեռևս խորհրդային տարիներից մեծ դերակատարում է ունեցել արդյունաբերության ճյուղը: Ներկայումս էլ ճյուղը պահպանում է իր դերակատարումը, ինչը արտահայտվում է նրանով, որ ՀՆԱ-ի կառուցվածքում ճյուղի տեսակարար կշիռը տատանվում է 20%-ի շրջակայքում:

Հայաստանի արդյունաբերությունը իր մեջ ներառել և ներկայումս է ներառում է տարբեր ենթաճյուղեր, մասնավորապես՝ մեքենաշինությունը, տեքստիլ ու հագուստի արտադրությունը, սննդի ու խմիչքների արտադրությունը, մետաղական հանքաքարի արդյունահանումը ու մշակումը, քիմիական արդյունաբերությունը, ցեմենտի և այլ ոչ մետաղական հանքանյութերի արտադրությունը, դեղերի արտադրությունը և այլն: Հարկ է նշել, որ վերջին տարիներին նաև ստեղծվել են նաև ձեռնարկություններ, որոնք թողարկում են արտադրանք որը նախկինում չի եղել, մասնավորապես ամրանների արտադրությունը, խողովակների արտադրությունը և այլն:

Վերը նշված բոլոր ճյուղերը ունեն ներուժ տեղական շուկայում իրացման, և արտահանմա ապահովման:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի ունեցան որակական տեղաշարժեր: Թեև տնտեսական աճի տեմպերը զիջում էին մինչճգնաժամային աճի տեմպերին, սակայն երկրի տնտեսական աճի կառուցվածքում էական դերակատարում սկսեցին ունենալ ավելի արտադրողական ճյուղերը:

Արդյունքում տնտեսական աճին մինչև 2013թ. առավելապես նպաստել են տնտեսության արտահանելի հատվածը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Նախաճգնաժամային ՀՆԱ-ի մակարդակը 2013թ. վերականգնվեց՝ ուղեկցվելով տնտեսության բոլոր ճյուղերում վերականգնման ցուցանիշներով՝ բացառությամբ շինարարության:

Հանրապետության տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու, արդյունաբերական ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու, տեղական արտադրությունը խթանելու, նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն որը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ուղրտների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ արտահանող և արտահանման ներուժ ունեցող ուղրտների զարգացման:

Փաստաթղթում նախանշվել են արտահանման տեսանկյունից հեռանկարային ուղրտներ (գինեգործություն, կոնյակագործություն, ոսկեգործություն, ժամագործություն, ադամանդագործություն, դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, թեթև արդյունաբերություն, ճշգրիտ ճարտարագիտություն և այլն), որոնց համար մշակվել և ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստում հավանության են արժանացել համապատասխան ուղրտային ռազմավարությունները և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերը:

2013 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մեկնարկել է Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիրը, որն իրենից ներկայացնում է տարեկան կտրվածքով նախատեսվող գործողությունների ամբողջություն՝ ուղղված արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

Վերը նշված ռազմավարությունը պետական աջակցության համալիր գործիքակազմի կիրառմամբ նույն պես նպաստեց այդ ճյուղերի զարգացմանը և արտահանման ծավալների մեծացմանը:

Սակայն հաշվի առնելով համաշխարհային շուկայում ընթացող գործընթացները, միջազգային համագործակցության տենդենցները և այն որ զարգացումը ինքնին դինամիկ գործընթաց է, արդյունաբերության ճյուղը զարգացման մեկ այլ մակարդակ փոխելու նպատակով, անհրաժեշտ է նոր լրացուցիչ ռազմավարական մոտեցումների կիրառում, որտեղ հաշվի կառնվեն ներկա ժամանակաշրջանի ներքին և արտաքին մարտահրավերները:

Ինչպես նաև կարևորելով արդյունաբերության ճյուղը, այդ ճյուղի պետական քաղաքականության իրականացման սկզբունքները ամրագրվել է «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով: Իսկ առաջիկա հինգ տարիների պետական քաղաքականության մոտեցումները պետք է ամրագրվի ծրագրով:

Արդյունաբերության զարգացման հնգամյա պետական ծրագիրը ապահովելու է արդյունաբերության ճյուղի զարգացման և պետական աջակցության նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության շարունակականությունը և ընդլայնումը, որի ուղղակի թիրախը կհանդիսանա արդյունաբերության ճյուղերի և ձեռնարկությունների ուղղակի աջակցությունը, արտահանման զարգացումը, արդյունաբերության զարգացման համար տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև արդյունաբերության տարածքային զարգացումը:

Այդ ծրագիրը կհանդիսանա արդյունաբերության ճյուղի զարգացմանն հաջորդ փուլի գրավականը:

2. Ծրագրի նպատակները և խնդիրները

Սույն Ծրագրի նպատակն է ապահովել արդյունաբերության ճյուղի զարգացման շարունակականությունը, պետական համակարգված քաղաքականության իրականացման

ճանապարհով, մասնավորապես՝ նպաստելով արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացմանն ուղղված գործողություններով:

Արդյունաբերության զարգացման տեսանկյունից նախանշվում է հետևյալ խնդիրները՝

- 1) Արտադրողականության ցածր մակարդակ,
- 2) Արտադրվող արտադրանքի մրցունակության ոչ բավարար մակարդակ,
- 3) Արտահանման կարողությունների ցածր մակարդակ,
- 4) Արտահանման տեսականու և ուղղությունների դիվերսիֆիկացման ոչ բավարար մակարդակ,
- 5) Արդյունաբերական արտադրանքի ներկայացվածության ցածր մակարդակ ներքին և արտաքին շուկաներում,
- 6) Արդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության ցածր մակարդակ,
- 7) Արդյունաբերական ձեռնարկությունների կադրային (մասնագիտական) և կառավարման ոչ բավարար մակարդակ,
- 8) Իրավաօրենսդրական և վարչարաչական խոչնդոտների առկայություն և անկայունություն,
- 9) Մրցակցության անհավասար պայմանների առկայություն,
- 10) Տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն:

3. Ծրագրի իրականացման սկզբունքները

Հիմք ընդունելով ճյուղի զարգացման առկա վիճակը, զարգացման միտումները և միջազգային փորձը ՀՀ կառավարությունը որդեգրում է ծրագրի իրականացման հետևյալ սկզբունքները՝

- 1) Արդյունաբերության զարգացումը ծրագրի իրականացումը պետք է դիտարկվի երկրի տնտեսության բոլոր հատվածների հավասարակշռված զարգացման համատեքստում:
- 2) Ծրագրի իրականացման ընթացքում հաշվի կառնվեն մինչ ծրագրի մեկնարկը իրականացված միջոցառումները, կապահովվի դրանց շարունակականությունը, հաշվի առնելով ներկա մարտահրավերները:

- 3) Ծրագրի իրականացման նշանակետում կլինեն արդյունաբերության բոլոր ենթաճյուղերը: Միջոցառումները կուղղվեն ինչպես առկա, այնպես էլ նոր հեռանկարային ճյուղերի զարգացմանը:
- 4) Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող գրծիքները կապահովեն ճյուղային և «կետային» (կոնկրետ ձեռնարկություն) զարգացման բաղադրիչներ:
- 5) Ծրագրի իրականացումը դիտարկվում է զարգացում երկարաժամկետ հեռանկարում, սակայն այն պետք է ապահովի տեսանելի և կանխատեսելի արդյունքներ կարճաժամկետ կտրվածքով:
- 6) Ծրագրի իրականացման ընթացքում առավելագույնս կապահովվի պետություն-մասնավոր հատված համագործակցությունը:
- 7) Ծրագրի իրականացումը պետք է նպաստի արդյունաբերության ճյուղի համար առավել կայուն և կանխատեսելի միջավայրի ձևավորմանը:
- 8) Ուշադրության կենտրոնում կլինի համակարգաստեղծ ձեռնարկությունների ձևավորումը և դրանց շուրջ փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծումը և զարգացումը:
- 9) Պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության ապահովում, ուղղված ծրագրի իրականացմանը:

4. Արդյունաբերության ճյուղի զարգացման ուղղությունները

Հաշվի առնելով, որ արդյունաբերության ճյուղի զարգացում ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում, ծրագրով նախանշվում է զարգացման հետևյալ ուղղությունները.

1. Արդյունաբերության արտահանելի հատվածի ընդլայնում և զարգացում.

Հաշվի առնելով տեղական շուկայի մեծությունը արդյունաբերության զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի արդյունաբերական ապրանքների արտահանման զարգացումը: Հայաստանի արդյունաբերական ճյուղի մի զգալի հատվածը ունի արտահանման մեծ ներուժ: Այդ իս պատճառով էլ դեռևս 2011 թվականից ՀՀ կառավարությունը որդեգրել է արտահանմանն ուղղված

արդյունաբերական քաղաքականության իրականացումը, և այդ տեսանկյունից արդյունաբերական մի շարք ենթաճյուղեր համարվել է գերակա, որոնց ուղղությամբ մշակվել և իրականացվում են գործողություններ:

Սակայն հարկ է նշել, որ արտահանմանն ուղղված քաղաքականությունը դեռևս ունի զարգացման մեծ հեռանկար և այդ առումով անհրաժեշտ է ապահովել այդ քաղաքականության իրականացման շարունակականությունը և հետագա զարգացումը: Արտահանման զարգացման տեսանկյունից պետք է շեշտադրում կատարել բացի գերակա ճյուղերից նաև արդյունաբերության մյուս ճյուղերին: Նաև Արտահանման քաղաքականության հետագա զարգացումը ենթադրում է ինչպես արտահանման ուղղությունների, այնպես էլ արտահանման տեսականու դիվերսիֆիկացում (այսուհետ՝ արտահանման դիվերսիֆիկացում), շուկայի պահանջարկին համապատասխան արտադրանքի թողարկում (մրցունակ արտադրանք), էլ ավելի ագրեսիվ տեղական արտադրանքի ներկյացում արտերկրում և այլն:

Արտահանման զարգացումը ապահովելու նպատակով առաջիկա հինգ տարիներին ՀՀ կառավարությունը կիրագործի հետևյալը՝

- Արտահանմանն ուղղված առկա պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում.
- Արտահանման դիվերսիֆիկացմանն ուղղված միջոցառումների և աջակցության նոր գործիքների մշակում և ներդրում, մասնավորապես՝ նոր շուկաների ուսումնասիրություն և այդ շուկաներ մուտքի ապահովմանն ուղղված գործողություններ.
- Արտադրանքի մրցունակությանն ուղղված պետական աջակցության նոր գործիքների մշակում և ներդրում, մասնավորապես՝ աջակցության գործիքների կիրառում, որոնք կբերեն ինքնարժեքի նվազեցմանը (տրանսպորտային և այլ ենթակառուցվածքային ծախսերի մասնակի սուբսիդավորում, մարքեթինգային ծախսերի փոխհատուցման մեխանիզմների կիրառում և այլն) և արտադրանքի որակի բարձրացմանը.
- Արտերկրում առևտրային ներկայացուցչությունների և տների հիմնում.
- Աջակցություն մասնագիտացված արտահանող կառույցների ձևավորմանը:

2. Արդյունաբերության զարգացման նպատակով տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում.

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փոքր շուկա ունեցող երկրի արդյունաբերության զարգացման համար արտահանումը կարևոր նախապայման է, սկայն ճյուղի զարգացման տեսանկյունից ներքին շուկայի ռեսուրսների մոբիլիզացիան և արդյունավետ ուղղորդումը ոչ պակաս կարևոր է: Արտահանումը պետք է դիտարկել նաև արտաքին առևտրաշրջանառության տեսանկյունից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ եթե տեղական արտադրանքի արտահանումը կարող է բերել ներքին շուկայում այդ արտադրանքի դեֆիցիտին և հետևաբար ահնրաժեշտ կլինի այն փոխարինել ավելի թանկ ներմուծվող նմանատիպ ապրանքով, ուսի բացասական ազդեցություն կարող է ունենալ նաև արտաքին առևտրի հաշվեկշռի վրա: Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներմուծումն գրեթե 3 անգամ գերազանցում է արտահանմանը: Ներմուծվող ապրանքների զգալի մասը նախկինում արտադրվել է տեղական ընկերությունների կողմից և այդ ներուժը ներկայումս էլ առկա է:

Այս տեսանկյունից կարևորվում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացումը ներկրվողի համեմատ: Իսկ տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը հնարավոր է հասնել արտադրողականության բարձրացմամբ, մատչելի ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովման (կապիտալ ներդրումների և շրջանառու միջոցների նպատակով), ընկերության որակյալ կառավարման և բարենպաստ մրցակցային միջավայրի ապահովման միջոցով:

Ներկրվող ապրանքները տեղական արտադրանքով փոխարինելու տեսանկյունից, բացի ապրանքի մրցունակությունից, կարևոր նշանակություն ունի նաև ներկրողների և արտադրողների միջև սերտ համագործակցությունը: Միջազգային լավագույն փորձը ցույց է տվել, որ հիմնականում ապրանք արտադրողները չեն հանդիսանում լավ վաճառողներ, իսկ ներկայիս ներկրողները հիմնականում զբաղվում են վաճառքով և արդեն իսկ ունեն բարձր հմտություններ այդ

բնագավառում: Արտադրողների և վաճառողների համագործակցությունը կխթանի ներքին շուկայում տեղական արտադրանքին իրացմանը:

Արդյունաբերության ճյուղի զարգացման նպատակով տեղական շուկայի ռեսուրսների օգտագործման տեսանկյունից կարևորվում է նաև տեղական արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացումը և կլաստերների ձևավորումը: Ներկայումս մի շարք ընկերություններ իրենց արտադրանքի թողարկման համար բազմաթից կոմպլեկտավորող դետալներ ներկրում են, սակայն այդ դետալները նաև արտադրվում կամ կարող են արտադրվել տեղական ընկերությունների կողմից: Նշվածը պայմանավորված է նաև իրազեկվածության ցածր մակարդակով:

Հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, պետք է նախատեսել նաև կոոպերացիոն կապերի զարգացումը անդամ երկրների արդյունաբերական ընկերությունների և հայկական արդյունաբերական ընկերությունների միջև:

Տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումն պետք է դիտարկել նաև տեղական հումքի առավել խորը վերամշակման ապահովումը հանրապետությունում: Հնարավոր է դիտարկել հանքագործական արդյունաբերության արտադրանքից վերջնական սպառման արտադրանք դիտարկելը, ինչը պետք է իրականացնել քայլ-քայլ: Մասնավորակես կարևորվում է պղնձի խտանյութից մաքուր պղնձի ստացումը, իսկ հետագայում այդ պղնձի օգտագործումը այլ արտադրություններում, ոսկու վերջնական զտարկման կազմակերպումը, ոչ մետաղական հանքանյութերից ջերմամեկուսիչ նյութերի արտադրության կազմակերպումը և այլն:

Արդյունաբերության զարգացման համար տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին ՀՀ կառավարությունը կիրագործի հետևյալը՝

- Արդյունաբերական ներուժի և հնարավոր արտադրատեսականու գույքագրում և գնահատում:
- Ներկրվող ապրանքատեսականու վերհանում և տեղական արտադրությամբ փոխարինելու նպատակով առանձնացում:

- Տեղական արտադրանքի մրցունակության՝ որակի, արտադրողականության և կառավարման որակի բարձրացման նպատակով արտադրական ընկերություններին պետական աջակցության տրամադրում:
- Բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման նպատակով իրավաօրենսդրական, տեխնիկական կանոնակարգման դաշտի մոնիթորինգի իրականացում և շարունակական բարելավում:
- Տեղական արտադրական ընկերություններ և ներկրողների միջև համագործակցության սերտացման նպատակով պարբերական հանդիպում-քննարկումների կազմակերպում և համագործակցության զարգացմանն ուղղված պետական խթանման և աջակցության այլ մեխանիզմների կիրառում:
- Տեղական արտադրանքի ներքին շուկայում ներկայացման (ցուցահանդեսներ և այլն), գովազդի և PR արշավների կազմակերպման աջակցություն:
- Տեղական և ԵԱՏՄ անդամ երկրների արդյունաբերական ընկերությունների միջև համագործակցության ընդլայնման նպատակով հանդիպում-քննարկումների կազմակերպում:
- Ոսկու զտարկման գործարանի և պղնձածուլարանի կառուցմանն ուղղված աշխատանքների իրականացում:

3. Արդյունաբերության ճյուղում ներդրումների, նորարարությունների, տեխնոլոգիական վերազինման, կարողությունների զարգացման խթանում.

Ներդրումների ներգրավումը անհրաժեշտ նախապայման է տնտեսության զարգացման համար և տնտեսության ցանակացած հատվածի զարգացումը առանց ներդրումների դժվար է պատկերացնել: Հանրապետության արդյունաբերության ճյուղը նույնպես կարիք ունի ներդրումների, սակայն այնտեղ ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է համապատասխան միջավայրի ստեղծում: Մասնավորապես՝ հաշվի առնելով, որ արդյունաբերության ճյուղում ներդրումների հետգնման ժամկետը ավելի երկարատև է ու հետևաբար ռիսկային, ուստի անհրաժեշտ է այնպիսի տնտեսական քաղաքականության իրականացում, որը կապահովի առավել կայունություն և կանխատեսելիություն, ինչպես նաև պետք է ամրագրել մի սկզբունք, որ ներդրողների պետության հանդեպ

պարտավորությունները (հարկային և այլ) պետք է առաջանան ներդրումների արդյունքում ստեղծվող գործունեությունից:

Միաժամանակ՝ անհրաժեշտ է կոնկրետ ներդրումային ծրագրերի վերաբերյալ պոտենցիալ ներդրողներին տեղեկատվության տրամադրումը, ներդրումային ծրագրի իրականացման փուլում ներդրողին <<ուղեկցումը>> և բոլոր պետական մարմինների համակարգված գործունեության իրականացումը ուղղված ծրագրի իրագործմանը:

Հայաստանի արդյունաբերական ճյուղի զարգացման տեսանկյունից կարևորվում է արտադրողականության բարձրացումը, որն հնարավոր կլինի ապահովել տեխնոլոգիական վերազինման և նորարարությունների ներդրման ճանապարհով:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է հասցեական պետական քաղաքականության իրականացում, որը կապահովի ներդրումների իրականացումը տեխնոլոգիական վերազինման նպատակով, գործող ընկերություններում նորարարությունների կիրառման ու նորարարությունների հիման վրա նոր արտադրությունների ստեղծման նպատակով:

Արտադրողականության բարձրացման, ինչպես նաև բիզնես կառավարման տեսանկյունից կարևորվում է նաև համապատասխան մասնագիտական կարողությունների զարգացումը:

Հարկ է նշել, որ ներդրումների իրականացումը, տեխնոլոգիական վերազինումը, նորարարությունների կիրառումը և մասնագիտական կարողությունների զարգացումը առավելագույնս կապահովեն արտադրվող ապրանքի մրցունակության բարձրացումը:

Վերոնշյալի ապահովման նպատակով առաջիկա հինգ տարիներին << կառավարությունը կիրագործի հետևյալը.

- Իրավական դաշտի ուսումնասիրություն և բարեփոխում, ինչը կապահովի առավելագույն կայունություն:
- Արդյունաբերության ոլորտում ներդրումային փաթեթների մշակում և ներկայացում պոտենցիալ ներդրողներին: Փաթեթները պետք է ներառեն այն բոլոր տարրերը, ինչը կապահովի ծրագրի իրականացման ընթացքում ներդրողի և պետական մարմինների միջև նվազագույն <<շփում>>:

- Կապիտալ միջոցների ներկրման ժամանակ կբացառվի սահմանին հարկերի գանձման ընթացակարգերը:
- Կմշակվեն պետական աջակցության գործիքներ, որոնք կխթանեն ներդրումները տեխնոլոգիական վերազինման, նորարարությունների ներդրման գործընթացին: Մասնավորապես կկիրառվի դրամաշնորհների ու սուբսիդիաների տեսքով ֆինանսական աջակցության մեխանիզմներ և նպաստող հարկային դաշտի ձևավորում:
- Շարունակական կբացահայտվի անհրաժեշտ կադրային պահանջարկը և կիրականացվի համապատասխան պատրաստման և վերապատրաստման միջոցառումներ:

4. Արդյունաբերության տարածքային զարգացման ապահովում.

Դեռևս խորհրդային ժամանակներից արդյունաբերական ձեռնարկությունները գործում էին հանրապետության տարբեր շրջաններում և քաղաքներում: Դրա արդյունքում մի շարք քաղաքներ մասնագիտացված էին որոշ ուղղություններով (օրինակ՝ Չարենցավանը՝ մեքենաշինությամբ, Գյումրին՝ տեքստիլ արդյունաբերությամբ և այլն): Դեռևս հանրապետության մարզերում որոշակիորեն պահպանված է և արտադրական հնարավորությունները և ավանդույթները:

Հարկ է նշել, որ հանրապետության այն տարածաշրջանները, որտեղ զարգացած է եղել արդյունաբերությունը առկա է նաև արդյունաբերության համար անհրաժեշտ ենթակառուցվածք:

Հաշվի առնելով ներկայիս արդյունաբերության ճյուղի զարգացման պահանջները հնարավոր կլինի որոշակի ներդրումների արդյունքում առկա ենթակառուցվածքները համապատասխանեցնել այդ պահանջներին և օգտագործել:

Հանրապետության մարզերում արդյունաբերության զարգացումը կարևորվում է նաև տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից:

Ներկայումս <<Արդյունաբերական քաղաքականության մասին>> ՀՀ օրենքը նոր հնարավորություն է ստեղծել արդյունաբերության զարգացման ճանապարհով ապահովելու նաև համաչափ տարածքային զարգացում: Այն է՝ արդյունաբերական գոտիների ստեղծումը:

Արդյունաբերական գոտիների ստեղծումը հնարավորություն կտա նաև բարելավել և օգտագործել առկա ենթակառուցվածքը, ապահովելով կայուն և կանխատեսելի միջավայր նպաստել նոր արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծմանը: Այս ուղղությամբ առաջիկա հինգ տարիներին ՀՀ կառավարությունը կիրագործի հետևյալը.

- Արդյունաբերական գոտիների ստեղծման հնարավորությունների (տարածքների) բացահայտում:
- Արդյունաբերական գոտիների ձևավորման և կառավարման մոդելի մշակում, միջազգային փորձի կիրառմամբ:
- Արդյունաբերական գոտիների ստեղծման երկու պիլոտային ծրագրի մշակում և իրագործում:

5. Ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ հենքի ձևակերպում.

Ծրագրի արդյունավետ իրականացման համար կարևոր նախապայման է հանդիսանում իրականացմա ինստիտուցիոնալ հենքի ձևակերպումը: Ինստիտուցիոնալ հենքի ձևակերպման տեսանկյունից կարևորվում է ինչպես պետական մարմինների գործառույթների հստակ տարանջատում, այնպես էլ մյուս մասնակից կառույցների գործառույթների տարանջատում: Ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ հենքը դա այն կառույցներն են, որոնք պատասխանատու են մշակեն և իրագործեն ծրագրից բխող միջոցառումները:

Ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ հենքը ներառում է՝

ՀՀ կառավարությունը,

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,

ՀՀ պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում,

Ծրագիրը իրագործող կառույցները (հիմնադրամներ և այլ),

Մասնավոր հատվածը և այլ շահագրգիռ կառույցներ:

Միջոցառումների իրագործման առավել հասցեականության ապահովելու նպատակով նպատակահարմար է նոր, ոչ պետական կառույցի ստեղծում, որը կիրագործի բացառապես արդյունաբերությանն ուղղված պետական աջակցության

և արդյունաբերական քաղաքականությունից բխող այլ միջոցառումների իրագործում:

Ծրագրի իրագործման արդյունավետության կարևորագույն գործոն է հանդիսանում բոլոր շահագրգիռ կողմերի ծրագրի առավել ընկալումը և իրականացման ընթացքին ներգրավվումը:

Այս ուղղությամբ առաջիկա հինգ տարիներին ՀՀ կառավարությունը կիրագործի հետևյալը.

- Պետություն-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման ապահովում:
- Արդյունաբերական քաղաքականությունից ծրագրերի իրականացման կառույցի ձևավորում և կարողությունների հզորացման ապահովում:

5. Ծրագրի ֆինանսավորումը

Ծրագրի իրականացման ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կնախատեսվեն ՀՀ պետական բյուջեով տարեկան կտրվածքով, բյուջետային գործընթացի պահանջներին համպատասխան, ինչը բխում է նաև «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքից:

Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցներ կարող են ներգրավվել օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Ֆինանսական գնահատականները կտրվեն յուրաքանչյուր միջոցառման համար համապատասխան տարվա բյուջետային հայտերում և ՄԺԾԾ-ներում:

6. Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից ակնկալվում է հետևյալ արդյունքները.

- Արդյունաբերական արտադրանքի ծավալների շարունակական աճի ապահովում.
- Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի ավելացում ՀՆԱ-ում:
- Արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալի շարունակական աճի ապահովում.
- Արտահանման ուղղությունների և արտահանվող տեսականու դիվերսիֆիկացում:

7. Միջոցառումների ժամանակացույց

N	Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարման պատասխանատու մարմին	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
1. Արդյունաբերության արտահանելի հատվածի ընդլայնում և զարգացում.					
1)	Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության պետական աջակցության ծրագրի մշակում և իրականացում:	Արտահանման քաղաքականության շարունակականության ապահովում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀՀ	2016-2020 թթ. տարեկան կտրվածքով	ՀՀ պետ. բյուջե
2)	Արդյունաբերության արտահանվող արտադրանքի հնքնարժեքի ձևավորման ուսումնասիրության իրականացում ըստ ճյուղերի և հնքնարժեքի նվազեցմանն	Մրցունակության վրա գնային տեսանկյունից ազդող գործոնների բացահայտում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀՀ	2016-2017թթ	ՀՀ պետ. բյուջե

	ուղղված պետական աջակցության գործիքի մշակում և կիրառում:				
3)	Արտերկրում առևտրային տների ստեղծման և գործելու մոդելի մշակում, առաջնային երկրների ընտրության չափանիշների սահմանում և երկրների ընտրություն:	Արդյունավետ գործունեության ապահովում և առաջնային երկրների ընտրության մեխանիզմի ձևավորում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016թ	ՀՀ պետ բյուջե
4)	Երեք ընտրված երկրներում առևտրային տների հիմնում մշակված մոդելին համապատասխան:	Հայկական արտադրանքի մշտական ներկայացվածության ապահովում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2017-2019թթ Տարեկան մեկ երկիր	ՀՀ պետ բյուջե
5)	Պետական-մասնավոր	Մասնագիտացված	ՀՀ էկոնոմիկայի	2016թ	ՀՀ պետ բյուջե

	համագործակցության սկզբունքով արտահանող կառույցի ստեղծման մոդելի մշակում և կառույցի ստեղծում:	կառույցի առկայություն	նախարարություն Մասնավոր հատված Միջազգային կազմակերպություններ	մոդելի մշակում 2017թ. Կառույցի ստեղծում	Մասնավոր հատվածի միջոցներ Միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներ
2.Արդյունաբերության զարգացման նպատակով տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում.					
1)	Արդյունաբերական ներուժի գույքագրում:	Ներուժի մասին ամբողջական տեղեկատվության առկայություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՆՁԱԿ	2016թ	ՀՀ պետ բյուջե
2)	ՀՀ Ներկրվող արտադրատեսականու վեր հանում, համադրում տեղական արտադրության հնարավորությունների հետ և խմբավորում:	Տեղեկատվության առկայություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016 թ	Ֆինանսավորում չի պահանջում

3)	Տեղական արտադրանքի որակի և արտադրողականության բարձրացման նպատակով ընկերություններին պետական աջակցության տրամադրման գործիքի մշակում և կիրառում:	Որակի և արտադրողականության բարձրացման խթանում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016թ. Գործիքի մշակում 2017 թ-ից կիրառում	ՀՀ պետ բյուջե
4)	Տեղական արտադրությունում կառավարման որակի բարձրացման նպատակով պետական աջակցության գործիքի մշակում և կիրառում:	Կառավարման որակի բարձրացման խթանում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016թ. Գործիքի մշակում 2017 թ-ից կիրառում	ՀՀ պետ բյուջե
5)	Ներկրվող և ՀՀ-ում արտադրվող ապրանքների համար հավասար մրցակցային պայմանների	Հավասար մրցակցությանը խոչնդոտող խնդիրների	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների	2016-2017թթ.	ՀՀ պետ բյուջե

	ապահովման նպատակով իրավա-օրենսդրական և տեխնիկական կանոնակարգման դաշտի ուսումնասիրություն և առաջարկների մշակում:	բացահայտում:	նախարարություն		
6)	Տեղական արտադրողների և ներկրողների մասնակցությամբ պարբերական հանդիպում քննարկումների անցկացում:	Հաղորդակցման ապահովում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2020թթ. Տարեկան առնվազն երկու անգամ	Ֆինանսավորում չի պահանջում
7)	Տեղական արտադրանքի PR արշավների կազմակերպում և գովազդի պետական աջակցության տրամադրում:	Տեղական արտադրանքի ներքին շուկայում առավելագույն ներկայացվածություն խթանում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2020թթ.	ՀՀ պետ բյուջե
8)	Պղնձածուլարանի և ոսկու զտարկման գործարանի	Նշված ոլորտում ներդրումների	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2020թթ.	ՀՀ պետ բյուջե

	ստեղծման ներդրումային առաջարկի ձևավորում և պոստենցիալ ներդրողներին ներկայացում:	ներգրավում:			
--	---	-------------	--	--	--

3.Արդյունաբերության ճյուղում ներդրումների, նորարարությունների, տեխնոլոգիական վերազինման, կարողությունների զարգացման խթանում.

1)	Իրավական փաթեթի մշակում սարքավորումները սահմանին ԱԱՀ-ով չհարկելու նպատակով:	Տեխնոլոգիական վերազինման խթանում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2016թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
----	---	-----------------------------------	---	--------	--------------------------------------

2)	Նորարարությունների ներդրման և տեխնոլոգիական վերազինման պետական աջակցության գործիքի մշակում և ներդրում:	Տեխնոլոգիական վերազինման խթանում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2020թթ	ՀՀ պետ բյուջե
----	--	-----------------------------------	-------------------------------	-------------	---------------

4.Արդյունաբերության տարածքային զարգացման ապահովում.

1)	Արդյունաբերական գոտիների ստեղծման և կառավարման մոդելի մշակում:	Արդյունավետ մոդելի առկայություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
2)	ՀՀ մարզերում երկու արդյունաբերական գոտու ստեղծման ծրագրի մշակում և իրականացում:	Պիլոտային արդյունաբերական գոտու ստեղծում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2016-2018թթ.	ՀՀ պետ բյուջե
5.Ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ հենքի ձևակերպում.					

1)	Արդյունաբերության զարգացման հիմնադրամի ստեղծում:	Պետական աջակցության տրամադրման հասցեականության ապահովման և աջակցող ենթակառուցվածքի առկայություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016թ.	ՀՀ պետ բյուջե
----	--	---	----------------------------------	--------	---------------

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անհրաժեշտությունը

Սույն որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-184-Ն օրենքի կիրարկման նպատակով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-184-Ն օրենքով սահմանված է, որ արդյունաբերության զարգացման պետական ծրագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ ուշ, քան պետական ծրագրի իրականացմանը նախորդող տարվա նոյեմբերի 15-ը՝ հինգ տարի ժամկետով:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Արդյունաբերության ոլորտում պետական կարգավորման և աջակցության գործընթացների համակարգում, տեղական արտադրողների մրցունակության բարձրացում, տարածքային զարգացում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

«Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-184-Ն օրենքի կիրարկման ապահովում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից

6. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ նախատեսվում է ապահովել «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-184-Ն օրենքի կիրարկումը:

7. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՏԵՂԵԿԱՆՔ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման հետ կապված այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում

ՏԵՂԵԿԱՆՔ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում (կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում) ծախսերի կամ եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: